10.56737/2953-7843-2023.08-118

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳԻ, ՀՊՄՀ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ ՀՈՎԱՐԴ ԳԱՐԴՆԵՐԻ «ԲԱՁՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ[1]

ՆԱԽԱԲԱՆ

Հայ միջնադարյան գրականության խոշորագույն դեմքերից է մեծ մտածող, եկեղեցական գործիչ, աստվածաբան, երաժշտագետ, երգահան, բանաստեղծ, մանկավարժ, 1166 թվականից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Դ. Կլայեցին, որին բազմատաղանդության համար ժամանակակիցներն անվանել են Շնորհալի։ Նրա գրական հարուստ ժառանգության ուսումնասիրության անկանգ ընթացքը նպաստել է շնորհալիագիտության զարգացմանը[2]։ Համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում Ներսես Շնորհալին ներկայանում է իբրեւ բացառիկ աստվածաբան, քաղաքական-հոգեւոր անխոնջ գործիչ, ազգային բանաստեղծ, երգահան։

1. Վերջին շրջանում նորովի արժեւորվում է Շնորհալու մեծ ներդրումը նաեւ հայ մանկական գրականության ասպարեզում։ Դեռեւս իր ժամանակին Շնորհալին, շարունակելով Գրիգոր Մագիստրոսի կրթական-մանկավարժական բարեփոխումների ծրագիրը, առաջադրում է դաստիարակչական նոր խնդիրներ։ «Շնորհալին հանդես է գալիս եւ որպես առաջին հայ մանկական գրող՝ նպատակ ունենալով սովորեցնել կոնկրետ նյութի վրա՝ շաղկապելով ուսուցման ու դաստիարակու-

---

[1]* *Ստացվել է՝ 23.08.2023, գրախոսվել է՝ 30.08.2023, էլ. հասցե՝* mnacakanyaneva@mail.ru։

[2] *Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, Գ. Ջարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ.–ԺԳ.դար), Վենետիկ, Սբ. Ղազար, 1895, Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա., Պէյրութ, 1959, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Բ., Երեւան, 1946, Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երեւան, 1980, Գ. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երեւան, 1964, Ա. Մադոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Երեւան, 1985, Ն. Թաշմիջյան, Ներսես Շնորհալին երգահան եւ երաժիշտ, Երեւան, 1973, Հ. Որսկանյան, Ներսես Շնորհալու պոեմները, Երեւան, 2006։*

թյան հարցերը,– գրում է Գ. Հակոբյանը։– Առաջին անգամ իր մանկավարժական գրվածքներով մեր գրականության մեջ երեւում է եւ առաջին հայ մանկավարժ բանաստեղծը, որն իր մի շարք բովանդակալից ու հանրամատչելի չափածո գրվածքներով հիմք է դնում մեր մանկական գրականությանը»[3]։

Շնորհալու գրեթե բոլոր գործերի նպատակադրումը նույնն է՝ մարդու հոգեկան աշխարհի ներդաշնակ զարգացում, «մտքի բացում», բարոյակիրթ անհատի դաստիարակություն։ Եւ սահմանափակություն չկա ուսուցման ու դաստիարակության ենթակա սերնդի տարիքի խնդրում. հաճախ կիրառվող «մանկտիք» բառը չի ենթադրում միայն նախադպրոցական ու դպրոցական տարիքը. օգտակարության նպատակադրումն ընդգրկում է մանուկներից մինչեւ հասակավորներ. «Ասասցուք եւ յաղագս ներքին մարդոյն, որ եւ օրինակ է արտաքնոյն զարդ՝ սորին հոգեւոր պայծառութեանն զարդու... Վասն որոյ զտեսանելիս եւ զլսելիս եւ զլեզու եւ զամենայն անդամս խրատեցեք ի բարիս շարժել, եւ ի չարիս անշարժ մնալ, եւ ողջախոհութեամբ եւ սրբութեամբ յաշխարհական ցանկութեանց եւ զբօսանաց զմիտսն ամփոփելով...»[4]։ Ուրեմն բանաձեւումը սա է. կրթության ու դաստիարակության հիմնական նպատակը մարդու ներքին հոգեւոր աշխարհը գեղեցկացնելն է, քանի որ առաքինի է այն մարդը, որը զուգված է հոգով եւ ոչ միայն արտաքինով։ Իր արձակ ու չափածո գործերում՝ «Վիպասանութիւն», «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ», «Բանք չափաւ», «Խրատ ուսումնականց մանկանց...», «Թուղթ ընդհանրական» եւ այլն, Շնորհալին հետապնդում է առաքինի եւ բարոյական մարդ կերտելու նպատակներ։ Նրա մանկավարժական երկերում ուսումը եւ իրական կյանքում բարոյակիրթ լինելը անքակտելիորեն կապված են եւ ունեն մարդու միտքն ու զգացմունքները կրթելու, կամքը զարգացնելու միտում, ինչին հասնելու համար մանկավարժն իր ստեղծագործություններում կիրառում է նյութի մատուցման մատչելիության[5] սկզբունքը։ Երբեմն Շնորհալին նշում է՝ ում համար եւ ինչ նպատակով է գրել.

---

[3] Գ. ՀԱԿՈԲՅԱՆ, *նշ. աշխ., էջ 154։*

[4] Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, *Թուղթ ընդհանրական, Երեւան, 1995, էջ 54, 55։*

[5] *Ա.Մադոյանը «Միջնադարյան հայկական պոեմը» ուսումնասիրության մեջ գրում է. «Իր նախորդների եւ իր իսկ փորձով Շնորհալին շատ շուտ համոզվեց, որ գրական ստեղծագործության մատչելիությունը վճռական նշանակություն ունի ընթերցողի, ունկնդրի համար։ Դժվարընկալելի, խրթին ոճով գրված երկերը, որոնց անհաղորդ են մնում շարքային*

Նորոգ, մանկունք իմաստութեան,
Տրւաք զայս բան ձեզ խրախութեան,
Երկնաւորացրն գիտութեան
Եւ համայնից եղելութեան[6]:

Մանուկներին է հասցեագրված «Խրատ ուսումնականց մանկանց...» բանաստեղծությունը, որը համապատասխանում է նրանց տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններին եւ իր տեսակի մեջ առաջինն է հայ մանկական գրականության պատմության մեջ։ Մանկավարժական այս երկի միջոցով Շնորհալին սովորեցնում է հայոց այբուբենը՝ հընթացս առաջադրելով դաստիարակչական խնդիրներ։ «Դա իսկապես մի մանկավարժական գրվածք է,– գրում է Մ. Աբեղյանը,– որով թե՛ այբբենն է կարգով սովորեցնում, թե՛ միաժամանակ բարոյակրթական խրատներ է տալիս մանուկներին։ Առանձնապես աչքի է ընկնում եւ այն, որ նա հորդորում է սիրել ուսումն ու գիտությունը»[7]։

Նպատակային են նաեւ Շնորհալու հանելուկները, որոնց մանկավարժական բնույթի ու նշանակության մասին ժամանակին գրել են մասնագետները։ «Խնդիրն այստեղ միայն ուսուցանելիք նյութը չէ,– գրում է Թ. Ավդալբեգյանը,– այլ այն ուղիները, մեթոդը, որով հեղինակը սրում է ընթերցողի միտքը, մղում դիտողականության ակտիվության, կապում շրջապատող աշխարհի հետ, բեւեռում ուշադրությունը երեւույթի էական կողմի վրա, զարգացնում կռահողականությունը եւ այլն։ Այս արդեն ավելի է, քան ուսումնա-կրթական նպատակը, ինչ-որ չափով սա վերաճում է մանկագրության, քանի որ այնտեղ հաշվի են առնվում տարիքային առաձնահատկությունները, մանկական հասակի աշխարհաճանաչումն ու երեւույթների կապակցման ունակությունն ու այլ հարցեր»[8]։

Այսպիսով՝ եթե Ներսես Շնորհալու հսկայածավալ գրական ժառանգությունից դիտարկենք միայն նրա չափածո խրատներն ու հանելուկները՝ իբրեւ մանուկներին հասցեագրված գործեր, ապա դա արդեն բավարար կլինի Շնորհալուն համարելու հայ առաջին մանկագիրը։ «Առանց

ընթերցողները, աննշան դեր ունեն կատարելու հասարակության կյանքում։ Ժողովրդին, հատկապես երիտասարդ սերնդին հասկանալի, օգտակար դարձնելով գրականությունը՝ Շնորհալին մատչելիությունը համարում է ամենաառաջնակարգ պահանջ» (նշ. աշխ., էջ 154–155)։

[6] Ն. Շնորհալի *Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 321։*

[7] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 117։*

[8] Ներսես Շնորհալի, *Հոդվածների ժողովածու, Երեւան, 1977, էջ 63։*

նսեմացնելու խաչատուր Աբովյանի դերը,– գրում է ժամանակակից գրականագետը,– արդարացի կլինի, որ հենց Ներսես Շնորհալուն համարենք հայ մանկագրության նախակարապետը, դրանով իսկ ....մանկական գրականության սկզբնավորումը իրապես «ետ տանենք» 12-րդ դար»[9]։ Անշուշտ, տեսակետը ձեւակերպվել է՝ հիմնվելով Շնորհալու գրական ժառանգության քննության եւ շնորհալիագիտության ծանրակշիռ ուսումնասիրությունների վրա, որոնք մեծ կամ փոքր չափով բացահայտում են Շնորհալու նորարարական սկզբունքները մանկավարժության եւ մանկագրության ոլորտներում։ Աբովյան–Շնորհալի ժառանգորդական կապի քննությունը թողնելով մեկ այլ առիթի՝ այստեղ նկատենք միայն, որ այսօր հայ մանկական գրականության սկզբնավորման մասին խոսելիս անառարկելի պետք է համարվի Ներսես Շնորհալու՝ հայ առաջին մանկագիրն ու մանկավարժը լինելու փաստը[10]։

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ գրականության մեջ հանելուկը հայտնի է «առակ», «առեղծված», «առասպել» «բեյթ», «հանելուկ», «հանանելիք» եւ այլ անվանումներով, որոնք հուշում են, որ բավական հին գրական այս տեսակի սկզբնավորման ակունքը բանահյուսությունն է։ Առհասարակ մասնագետները հայկական հանելուկները բաժանում են երկու խմբի՝ բանահյուսական եւ հեղինակային։ Հասկանալի է, որ բանավոր ու գրավոր հանելուկների ծագման, զարգացման ընթացքն ունեցել է տարբեր դրսեւորումներ։ Եթե ժողովրդական հանելուկներն ստեղծվել են վաղնջական ժամանակներում, ապա անհատականների ծնունդը կապվում է Ե. դարում հայ դպրության հիմնադրման հետ։ Հանելուկի գրական տեսակը

---

[9] Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *Ոսկեդարից մինչեւ 21-րդ դ. (Հայ մանկապատանեկան գրականության ակունքներն ու զարգացման փուլերը), Գիրք Ա., Երեւան, 2008, էջ 99։*

[10] Խ. ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻ *«Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության» (1961) եւ* Ս. ԼԱԼԱԽԱՆՅԱՆԻ *«Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր» (1973) աշխատություններում, իբրեւ հայ մանկագրության հիմնադիր, նշվում է Խ.Աբովյանի անունը։ Իհարկե անժխտելի է, որ Աբովյանն առաջինն է մանկավարժությունը դիտարկել իբրեւ գիտության առանձին ճյուղ, մշակել դասավանդման նոր մեթոդներ, կազմել «Նախաշավիղ կրթության» դասագիրքը, մանկական գրականությունն առանձնացրել ընդհանուր գրականությունից, սակայն անվիճելի է այն փաստը, որ մանկավարժական ու մանկական գրականության հիմնարար սկզբունքների սաղմերը ձեւավորել էր Շնորհալին։*

բնորոշվում է ավարտուն բանաձեւերով, փոքր ծավալով, կուռ եւ սեղմ շարադրանքով, որ ճանաչողական իմացության արդյունք է՝ ստեղծված մտածումի, տրամաբանության զուգորդությամբ։ Դատողականության շնորհիվ գրավոր հանելուկները հաճախ ունենում են փիլիսոփայական խորություն եւ ենթիմաստ։ Բնականաբար՝ հանգամանքը կապվում է հանելուկների հեղինակների հետ, որոնք հիմնականում ժամանակի խոշորագույն մտածողներից են։ Խոսուն է Ներսես Շնորհալու հանելուկների շարքի խորագիրը՝ «Նորին տեառն Ներսէսի ասացեալ զՍահմանն իրին, որ կոչի լուծմունք, վասն խոհեմ բանասիրաց, զի մտախոհ լինելով ասասցեն զանունս իրին»։

Ներսես Շնորհալու հանելուկները հայ գրականության աշխարհականացման առաջին դրսեւորումներն են։ Ա. Մնացականյանը գրում է. «Հանգամանալից հետազոտությունը թույլ է տալիս ավելի վստահորեն պնդել, թե հայ գրականության աշխարհականացման ամենացայտուն արտահայտություններից մեկը, իրո՛ք, Ներսես Շնորհալու հանելուկներն են։ Նա գրեց ավելի մեծ թվով հանելուկներ, քան մյուս բոլոր հեղինակները միասին վերցրած։ Երեւույթի ուժը, սակայն, սոսկ քանակի մեջ չէ, այլ գաղափարական բովանդակության, ստեղծագործական հնարանքների, ինչպես նաեւ ժողովրդական հանելուկների լիարժեք օգտագործման՝ թե՛ ձեւի, թե՛ բովանդակության առումով»[11]։ Այսպիսով՝ իր հանելուկները Շնորհալին վերցրել է ժողովրդի հոգեւոր գանձարանից՝ գեղարվեստորեն մշակելով դրանք։ Նրա անվան հետ են կապվում հանելուկի՝ իբրեւ գրական առանձին տեսակի, ստեղծումն ու կատարելագործումը։

1512–1513 թթ. հրատարակած[12] հայերեն առաջին «Տաղարանում» Հակոբ Մեղապարտը զետեղում է Ներսես Շնորհալու հանելուկների մի շարք՝ «Տեառն Ներսէսի հայոց կաթողիկոսի ասացեալ է Հանելուկս վասն ուրախութեան մարդկան»[13] խորագրով։ Շնորհալուց մեզ հասել է ավելի քան 300 հանելուկ, որոնք, ըստ Կիրակոս Գանձակեցու, հեղինակն ստեղծել է հատուկ նպատակով. «Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս,

[11] Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երեւան, էջ 69։

[12] Հայ միջնադարյան հանելուկների՝ այդ թվում Ներսես Շնորհալու հանելուկների հրատարակման պատմությունը եւ սկզբնաղբյուրների մասին տե՛ս Ա. Մնացականյան, նշ. աշխ., էջ 15–34։

[13] Յ. Մեղապարտ, Տաղարան, Վենետիկ, 1513։

արար եւ առակս խորհրդաբարս ի գրոց, եւ հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս եւ ի հարսանիս...»[14]։ Պատահական չէ հանելուկների բնութագրությունը՝ «Առակք վասն ուրախութեան մարդկան»։ Մ. Աբեղյանը, սակայն, նկատում է. «Առակք» բառն այստեղ չպիտի հասկանալ արդի իմաստով, այլ իբրեւ «հանելուկներ»... Ինչպես ժողովրդական հանելուկների, նույնպես եւ «առակների» նպատակն է ոչ այնքան մարդկանց ուրախացնել, որքան զվարճալի եղանակով սովորեցնել եւ սրամտություն զարգացնել, դիտել տալ բնությունը, զանազան իրեր եւ այլն»[15]։

Շնորհալին ստեղծել է հանելուկներ եւ կրոնական, եւ աշխարհիկ բովանդակությամբ։ Մեր ուսումնասիրության կենտրոնում բնականաբար այն հանելուկներն են, որոնք այսօր անբաժանելի մաս են կազմում մանկական գրականության մանրապատում տեսակների մեջ եւ առանձնանում են թե՛ ձեւով եւ թե՛ բովանդակությամբ։ Շնորհալիագիտությունն արձանագրել է, որ առաջին անգամ նա է մշակել գրավոր հանելուկի բանաստեղծական կայուն[16] ձեւ՝ ութվանկանի նույնահանգ քառատողը։ Ու թեեւ որոշ ձեռագրերում կան շեղումներ, այնուամենայնիվ հիմնականում հանելուկներում պահպանված է նշված տաղաչափությունը։

Դաշտ մի կայր՝ առնակ ու լայն,
Լցեալ ծաղկամ յոյժ զանազան,
Ոչ յեղանակս միայն գարնան,
Այլ անթառամ միշտ յափտեան[17]։
(երկինք)

Առանց նորա կեանք ոչ լինի,
Բոլոր աշխարհ նովաւ շարժի.
Այլեւ երկինք նա անուանի,
Եւ ենթական՝ Հոգւոյն մեծի...[18]
(հողմ)

---

[14] Կ. Գանձակեցի, *Պատմութիւն հայոց (աշխատ.՝ Կարօ Մելիք-Օհանջանեանի), Երեւան, 1961, էջ 147։*

[15] Մ. Աբեղյան, *Երկեր, հտ. Դ., Երեւան, 1970, էջ 119–120։*

[16] *Մասնագետներից ոմանք կարծիք են հայտնել, թե Շնորհալին, քառատողերից բացի, գրել է նաեւ 2, 3, 5, 6, 8, 12, 24 տողերից բաղկացած հանելուկներ։*

[17] *Մատենագիրք հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար,* Ներսես Շնորհալի, *Գիրք Ա., Երեւան, 2018, էջ 1306։*

[18] *Անդ, էջ 1307։*

Որքան էլ հանելուկների հիմքը բանահյուսական է, միեւնույնն է, դրանք կրում են Շնորհալու անհատականության կնիքը, բացահայտում են հեղինակի գրչի ուժը։ Հեղինակը ժողովրդական հանելուկները գեղեցիկ ու պատկերավոր ոճով վերածում է նույնահանգ քառյակների՝ վերջնարդյունքում ստեղծելով փոքրիկ բանաստեղծություններ։

Գաղափարական բովանդակության տեսանկյունից եւս Շնորհալու հանելուկները յուրահատուկ են։ Տեսարան առ տեսարան բանաստեղծը խտացնում է շրջապատող աշխարհն ու բնությունը, մարդկային իրականությունը, կենցաղը, հայոց պատմությունն ու բանահյուսությունը, հայ երեխային մղում ճանաչելու իր ժողովրդի մեծանուն զավակներին, եւ այդ ամենը՝ ժողովրդախոսակցական լեզվով, ինչը նրա հանելուկներին հաղորդում է հասարակական հնչեղություն։ Հանելուկների մեջ կան նմուշներ, որտեղ առարկան տրվում է իր ուղղակի եւ իրական նկարագրով, մեկ-երկու ակնհայտ հատկանիշներով, եւ երեխան, ի մի բերելով իր գիտելիքները եւ համադրելով իրեն հայտնի այլ առարկաների հետ, փորձում է գտնել պատասխանը։

Լսէ՛, եղբա՛յր, քաջ կարեւոր,
Առ քեզ նշան՝ ինքն է բոլոր.
Նա իւղ ունի, կեղեւն՝ ոսկոր,
Կտուեա՛ եւ կեր զգուռզն աղուոր[19]:
(ընկույզ)

Առհասարակ հանելուկի դեպքում հատուկ նախապայման է երեւույթը ճանաչել տալը՝ նրա ընկալելի, բնութագրական հատկանիշների բանաստեղծականացմամբ։ Սակայն երբեմն այդ հատկանիշները ձեւակերպվում են փոխաբերական բարդ ու փիլիսոփայական պատկերներով, որոնք երեխայից պահանջում են առավել սուր դիտողականություն, մտքի ճկունություն, համեմատություններ անելու կարողություն։ Որոշ հանելուկներ, մտքի սրումից բացի, ձեւավորում են նաեւ երեխաների գեղագիտական ճաշակը՝ ներազդելով երեւակայության ու զգացմունքների վրա։

Թագաւորաց աղուոր տեսակ,
Զամեն հագնի կանաչ դիպակ,

[19] *Անդ, էջ 1314։*

Խաշինք ունի անթիւ բանակ,
Շատ գէր ձիաւ՝ որձ ու մատակ[20]:
(գարուն)

Անշուշտ, բացի զուտ բանաստեղծական պատկերից, հանելուկը ենթադրում է նաեւ այդ պատկերի ուղղակի կամ այլաբանական բովանդակության վերաիմաստավորում: Այստեղ ազդում է մտածողության, ընկալումների եւ իմաստավորման ժամանակային խնդիրը, եւ հանելուկը հեշտ լուծելի է դառնում, երբ նրա առարկան շփման եզրեր է ունենում նաեւ այլ ժամանակների հետ: Այս առումով Շնորհալու հանելուկները, անցնելով ավելի քան ութ հարյուրամյակ, այսօր էլ դեռ պահպանում են իրենց դաստիարակչական, մանկավարժական, գեղագիտական նշանակությունը, ավելին՝ միանգամայն հաջող քննություն են բռնում ժամանակակից տեսությունների համատեքստում: Դրանցից մեր ուշադրությանն արժանացել է Հ. Գարդների «Բազմաբնույթ մտածողության» տեսությունը:

Հ. ԳԱՐԴՆԵՐԻ «ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1983 թ. Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ամերիկացի մանկավարժ-հոգեբան Հովարդ Գարդները հրատարակում է «Գիտակցության կառուցվածքը» գիրքը՝ ներկայացնելով բազմաբնույթ մտածողության *տեսությունը, որը բանականությունը դիտում էր իբրեւ մարդու՝ տարաբնույթ խնդիրներ վճռելու ունակություն, նաեւ նոր խնդիրներ բացահայտելու եւ հիմնավորելու կարողություն, ինչն էլ դառնում է հիմք նոր գիտելիքների ձեռքբերման համար:*

Հ. Գարդները պնդում է, որ յուրաքանչյուր մարդու բնորոշ են մտածողության, ընկալման եւ իմաստավորման բազմաթիվ ձեւեր, որոնք գրեթե միշտ գործում են միաժամանակ եւ մարդու կարողությունների զարգացման կամ տարաբնույթ խնդիրների լուծման ընթացքում ունեն միմյանց փոխլրացնելու հատկություն: Տեսությունը միտված է լուծելու հատկապես կրթական համակարգին առնչվող մի շարք խնդիրներ եւ անձի զարգացման ընթացքը տեսնում է բնական փոխանցումների մեջ՝ գրականությունից դեպի կենսափորձի, հույ-

[20] *Անդ, էջ 1257:*

զերի ու զգացմունքների ձեւավորում, այլ խոսքով՝ կյանքի որոշակի իրավիճակներում կամ պայմաններում նոր խնդիրներ լուծելու համար ստացած գիտելիքների իրացում։ Ուրեմն կրթական գործընթացում առաջնային է դառնում ոչ թե ուսուցանվող նյութի քանակը, այլ նյութի ընկալման խորությունը։

Գարդներն առանձնացնում է մտածողության յոթ տիպ.

1. լեզվական,

2. մաթեմատիկական-տրամաբանական,

3. երաժշտական,

4. տարածական,

5. շարժողական,

6. միջանձնային,

7. ներանձնային։

Եթե համառոտ բնութագրելու լինենք այս տիպերը, ապա կարելի է ասել՝ լեզվական *մտածողությունը ենթադրում է խոսքը, լեզուն՝ որպես մտածողության եւ հաղորդակցության միջոց օգտագործելու կարողություն,* տրամաբանական- մաթեմատիկական *մտածողությունը՝ տրամաբանական, վերլուծական մտածողության, առարկաների եւ գաղափարների առնչություններն ու օրինաչափություններն ընկալելու կարողություն,* երաժշտական *մտածողությունը՝ երաժշտության, կշռույթի, մեղեդու, ներդաշնակության, նաեւ միջավայրի ձայներն ու հնչյուններն ընկալելու եւ արտածելու, որեւէ գործիք նվագելու, ստեղծագործելու, գնահատելու կարողություններ,* տարածականը՝ *փաստերի, երեւույթների տարածական, զննական, ընկալման կարողություն,* շարժողական *մտածողությունը ենթադրում է մարմնի, շարժումների միջոցով միջավայրը, գաղափարներն ու երեւույթներն ընկալելու կարողություն։* Միջանձնային *մտածողությունը ներկայացնում է այլ մարդկանց հետ շփման ու համագործակցության, նրանց հետ տարաբնույթ քննարկումներ իրականացնելու եւ ընկալելու կարողությունը։ Վերջապես՝* ներանձնային *մտածողությունը ենթադրում է ինքնաբացահայտման կարողություններ՝ ճանաչել սեփական ցանկությունները, նպատակները, զգացմունքները, վախերը, վարքի դրդապատճառները, եւ դրանց հիման վրա նոր մտքեր, գաղափարներ առաջադրելու կարողություն։ Գարդների տեսության հիմնական դրույթներն են՝*

1. Բանականությունը չի կարելի չափել արհեստական փորձարարական աշխատանոցների (լաբորատոր) պայմաններում՝ ինչ որ առաջադրանքներ (թեստեր) լուծելով։

2. Բանականությամբ իրականացվող առաջադրանքների միջոցով անառարկելիորեն մերժվում է ցեղերի (ռասա) բացատրությունը։

3. Մարդու բանականությունը միօրինակ չէ, այն բազմակի է[21]։

Այսպիսով՝ Գարդներն առաջադրում է մարդու անհատականությունն ամբողջացնող, նրա հնարավորություններն ի հայտ բերող մի տեսություն, որի կիրարկումը հատկապես ուսուցման գործընթացում նպաստում է սովորողների հնարավորությունների ու կարողությունների գրեթե ամբողջական բացահայտմանն ու զարգացմանը։ «Բազմակի բանականությունը» չի կարող եւ չպետք է ինքնին լինի կրթության նպատակը,– գրում է նա։– Պետք է վերագնահատվեն կրթական համակարգի շահերը, եւ դա չի կարելի անել պարզապես գիտական տեսության հիման վրա։ Բայց եթե մարդը գիտի, թե ինչ նպատակներ ունի կրթություն ստանալու հարցում, ապա բազմակի մտածողության տեսությունը կարող է շատ օգտակար լինել նրա համար»[22]։

ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ ԳԱՐԴՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ներկա ուսումնասիրության խնդիրն է քննել Ներսես Շնորհալու հանելուկները ժամանակակից նոր տեսությունների համաբնագրում եւ բացահայտել այդ գործերի ներգործությունը ԻԱ. դարի մարդու մտածողության յոթ կարգերի զարգացման վրա։ Ուսումնասիրության համար ընտրել ենք մանուկներին հասցեագրված աշխարհիկ բնույթի մի քանի հանելուկ։

Շնորհալու հետաքրքրության կենտրոնում տիեզերական անսահմանության ողջ պարունակներն են բնությունը, երկինքը, աստղերը, կենդանական աշխարհը, թռչունները, տարերային ուժեր, առհասարակ այն ամենը, ինչն աղերսվում է մարդկային հասարակությանը։ «Տիեզերա-

[21] *Տե՛ս* Говард Гарднер, Структура разума: теория множественного интеллекта, М., 2007, https://baguzin.ru/wp/govard-gardner-struktura-razuma-teor/

[22] *Անդ։*

կան մարմինները երկնքում, բնական երեւույթները երկրում, այս երկուսը միասին կազմում են այն հանելուկների առարկան, որոնք գալիս են մարդուն բացատրելու առերեւույթ թվացող առեղծվածայինն ու անհասկանալին»[23],– գրում է Գ. Հակոբյանը։ Հանելուկներում ակնհայտորեն առկա է Շնորհալու կրթական նպատակադրումը. տալով ժամանակի համար անհրաժեշտ գրեթե բոլոր ոլորտներին առնչվող գիտանքներ՝ ճանաչելի դարձնել աշխարհը, երկիրը, բնությունը, պատմությունը, ընթերցողի հոգում սերմանել բարոյական ու ազգային արժեքներ։ Բայց այստեղ խնդիրը միայն փոխանցվող նյութը չէ, այլ այն ճանապարհը, որով Շնորհալին սրում է մանուկների միտքը, մղում դիտողականության, բեւեռում նրանց ուշադրությունն արտաքին աշխարհի էական կողմերի վրա, ձեւավորում կռահողականություն։ Բնականաբար՝ ճանաչելի ու կռահելի դարձնելու գործընթացը նախ եւ առաջ իրականանում է համապատասխան մտավոր գործողությունների միջոցով, երբ նպատակ է դրվում հանելուկի միջոցով հայտնաբերել երեւույթների, իրերի անտեսանելի շերտերում թաքնված իրողություններն ու տարրերը, լուծել առաջադրված խնդիրը՝ հաղթահարելով դժվարությունները։ Պահանջվող մտավոր ու ֆիզիկական կարողությունները, մեր համոզմամբ, նպաստում են մտածողության կարգերի զարգացմանը։

Այսպես՝ բացառիկ գեղեցիկ եւ ուշադրության արժանի են արեւին, աստղերին, լուսնին, ամպերին, կենդանիներին ու թռչուններին, գրքին ու ուսմանը նվիրված հանելուկները, որոնց բանաստեղծական պատկերները խորհրդավոր հյուսվածքով ներկայացնում են մարդկային կյանքը լուսավորող, ջերմացնող տիեզերածավալ երեւույթները։ Օրինակ՝ առեղծվածային ու անհասկանալի են աստղերը, որոնք՝ իբրեւ ավազի հատիկներ, ջրի հետ երկինք են բարձրացել եւ երկնային անմար բոցերով լցված՝ լուսավորում են աշխարհը։

Ջաւ ի վեր ջուրն է մեկնած,
Ներքոյ ամուր աւազով փակած,
Աւազն ամեն հրով լցած,
Մի քան զմի պայծառացած[24]։
(աստղեր)

---

[23] Գ. Հակոբյան, *Ներսես Շնորհալի, էջ 226–227։*

[24] *Մատենագիրք հայոց, հտ. ԻԱ., ԺԲ. դար,* Ներսես Շնորհալի, *Գիրք Ա., Երեւան, 2018, էջ 1306։*

Շնորհալու՝ այլաբանորեն հորինված գեղեցիկ հանելուկներից յուրաքանչյուրն ընթերցողին ոչ միայն մղում է մտքի կենտրոնացման, այլեւ նրան զինում է աշխարհճանաչողական նորանոր գիտելիքներով, բարոյական որակներով։

Ան մի կայր գունով կապոյտ,
Հետ գայր ‘ւ առնոյր պտոյտ-պտոյտ,
Յիւր փորն կայր այն բարոյն գիտ,
Որ ի ցամաքն մեռնի շուտ[25]։

(գետ)

Բերված «Գետ» հանելուկի պատասխանը (անշուշտ աշխարհաբարով ներկայացնելուց հետո) ժամանակակից դպրոցականն առանց դժվարության կարող է գտնել՝ հենվելով գետերին բնորոշ հատկությունների վրա։ Առաջնահերթ է դառնում լեզվական *մտածողությունը, որի հիմքը բառերի իմաստների նկատմամբ զգայունակությունն է, բանավոր կամ գրավոր լեզվի զգացողությունը։ Այս եւ մյուս բոլոր հանելուկների ընթերցանությունը, անգիր սերտելը, դասավանդման գործընթացում հաճախակի կիրարկումը ընդլայնում են երեխաների լեզվական կարողությունները զարգացնելու, դրանք ստույգ նպատակի համար արդյունավետ կերպով օգտագործելու հնարավորությունը։ Առհասարակ լեզվական մտածողությունը մարդկության գոյության ամենակարեւոր նախապայմաններից է, ուստի անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել երեխաների լեզվական ունակությունների զարգացմանը։ Հիշենք հանելուկներից եւս մեկը. Շնորհալին կենդանի վերարտադրությամբ տալիս է առարկայի մեկ-երկու հատկանիշ, զուգադրում համեմատելի այլ առարկաների հետ, եւ երեխային մնում է լեզվամտածողության կենտրոնացումով համադրել, վերլուծել ու տալ հանելուկի պատասխանը։*

Զորքոտանի է զետ զշուն,
Ու ձու ածէ զետ զթռչուն,
Խոտ նա ուտէ զետ զանասուն,
Ունի մզկիթ եւ ոսկրէ տուն[26]։

(կրիա)

---

[25] *Անդ, էջ 1280։*
[26] *Անդ, էջ 1297։*

Բանաստեղծները գերզարգացած լեզվական բանականություն (մտացիություն) կրողներ են, որոնք բավական զգայունակ են հնչյունների, ձայների, չափերի նկատմամբ։ Այդ առավելությունը թույլ է տալիս ոչ միայն ավելի լավ պատկերացնել լեզվի գործառույթները, այլեւ ըստ նպատակների ուղղորդել այդ գործառույթները։ Ճիշտ ընտրված բառերի, արտահայտությունների միջոցով Շնորհալին կարողանում է եՀ համոզել, եՀ խրախուսել, եՀ ուրախացնել մանուկ ունկնդրին կամ ընթերցողին։

Ուշադիր ուսումնասիրության դեպքում ակներեւ է դառնում այն հանգամանքը, որ լեզվականին զուգընթաց որոշակիորեն զարգանում է նաեւ երաժշտական մտածողությունը։ Վերեւում նկատեցինք, որ Շնորհալին մեծապես կարեւորել է հանելուկների տաղաչափական ձեւույթը եւ կառուցել դրանք հատուկ ընտրվածքով։ Որեւէ բառ, հնչյուն կամ հանգ հանելուկներում պատահականության արդյունք չէ։

Հանելուկի բովանդակության ճիշտ ընկալման համար բանաստեղծը տեղ է տալիս նաեւ ձեւին, կշռույթ ձեւավորող միավորներին՝ բանատող, ոտք, անդամ, հանգ։ Դրանց պարբերական կրկնությունից առաջանում է կշռույթ, ինչն էլ կազմում է ոչ միայն չափածո խոսքի, այլեւ երաժշտական զգացողության հիմքը։ Շնորհալու որոշ հանելուկներ ուսուցիչը կարող է մատուցել երաժշտության ուղեկցությամբ եւ միաժամանակ ծանոթացնել աշակերտներին միջնադարի մեծ երգահանի հոգեւոր երգերին՝ զարգացնելով նրանց երաժշտական միտքն ու ճաշակը։

Բելգիացի հայագետ Ֆ. Նեւը գրել է, որ Շնորհալին, «լինելով եռանդուն եւ բեղմնավոր հեղինակ, մեծ համբավ է թողել արձակում ու չափածոյում, այլեւ երաժշտության մեջ», եւ որ նա, ստեղծագործելով գրական ամենատարբեր ձեւերով ու տեսակներով, «մի շարք ուղղություններով առաջ է մղել հայ մատենագրությունը, հատկապես բանաստեղծական արվեստը»[27]։

Շնորհալու հանելուկները պահանջում են մտասեւեռում, դիտողականություն։ Պատասխանը որոնելիս լեզվական մտածողությանը զուգահեռ առաջնային է դառնում նաեւ մաթեմատիկական-տրամաբանական

---

[27] Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, *նշ. աշխ., էջ 92։ Տես նաեւ* Ա. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, *Ֆելիքս Նեւը եւ հայ քրիստոնեական մատենագրությունը, Երեւան, 2001։*

մտածողությունը[28]*, որ, ըստ Գարդների, ի տարբերություն լեզվական ու երաժշտական կարողությունների՝ հիմքեր չունի բանավոր միջավայրում, ուղղակիորեն կապված է մարդկանց տրամաբանելու, վերացարկելու, դատողություններ անելու, առարկաների պատճառահետեւանքային կապերը հասկանալու ունակությունների հետ։ Այս տեսանկյունից Շնորհալու հանելուկները ոչ միայն կենտրոնացնում, այլեւ զարգացնում են տրամաբանությունը, խնդիրները տրամաբանորեն լուծելու կարողությունը, տարաբնույթ հաշվարկներ, մաթեմատիկական գործողություններ կատարելու հմտությունը։ Ասվածի վառ արտահայտությունն է հետեւյալ հանելուկը.*

Ինն քառակի փակեաց,
Որ ճարտար մարդիկն իմանան,
Զկէսն տասնեւութ առնէ,
Որ ախմար մարդիկն չիմանան[29]։
(36)

Առաջարկվող հանելուկը երեխային մղում է թվաբանական պարզ հաշվարկներ կատարելուն. չորս իններից՝ առաջին տողով պարզ ասում է՝ 9x4=36։ Շնորհալին գրում է, որ այն ճարտար մարդիկ կարող են հասկանալ, սակայն բավական հեշտ գուշակվող է, եւ դպրոցահասակ երեխան անմիջապես լուծում է առաջին խնդիրը։ Նույնը վերաբերում է 3-րդ տողին, որտեղ ասվում է, թե կեսը դառնում է 18, որ 36-ի կեսն է։

Ուշագրավ է նաեւ գրչին նվիրված հանելուկը.
Քառեակ տառիւ անուն կոչէ,
Զէ կենդանի եւ ճաշակէ,
Զինչ որ ուտէ՝ դարձեալ փսխէ,
Նովաւ հոգիս մեր կերակրէ,
Սկիզբն է երեակ ի տասնեկէ,
Զորսն է եաւթնեակ ի հարիւրէ[30]։

---

[28] *Մաթեմատիկական-տրամաբանական կարողությունները երեխան ստանում է՝ արտաքին աշխարհի առարկաները միմյանց նմանեցնելով, համեմատելով, հակադրելով, դրանց քանակը որոշելով, ինչը նշանակում է, որ մաթեմատիկական-տրամաբանական մտացիությունն ավելի է հեռանում իրերի աշխարհից։*

[29] *Անդ, էջ 1311։*

[30] *Անդ։*

Շնորհալու հանելուկները մեծապես նպաստում են նաեւ տարածական մտածողության զարգացմանը, որը ներառում է թե՛ ընդարձակ, թե՛ սահմանափակ տարածություններ ճանաչելու, դրանցում կողմնորոշվելու, չափերը տարբերակելու կարողություն։ Ըստ Գարդների՝ այս տեսակի բանականությանը բնորոշ են այն էատարրերը, որոնք թույլ են տալիս հստակորեն ընկալել տեսողական աշխարհը, պատկերացնել եւ փոխակերպումներ անել սեփական մտքում։ Տարածական մտածողությունը կարող է զարգանալ նույնիսկ տեսողականից առանձին (օրինակ՝ կույրերի դեպքում)։ Շնորհալու հանելուկները լուծելիս ինքնաբերաբար կարեւորվում է տարածական մտածողությունը. զուգահեռաբար հարաբերվում են երկու տարածություններ՝ բաց եւ փակ։ Որոշակի տարածության մեջ (դպրոց, տուն, բակ, այգի եւ այլն) գտնվող երեխան մտովի տեղափոխվում է մեկ այլ տարածություն եւ իր մտապատկերում ուրվագծում առաջարկվող հանելուկի սահմանը, չափերը, հարաբերակցությունը այլ առարկաների հետ։ Օրինակ՝

Ջամեն խաղայ ի գնայուն տուն,
Հայնց սուր երթայ զինչ զթոչուն,
Բնաւ չընկնի յիւր աչքն քուն,
Հանցեղ չկայ իսկի սիրուն[31]։

(նուկ)

Կամ՝

Քարգործ մի կայր խիստ իմաստուն,
Հրաշից ծաղկանց շինեց իր տուն,
Քաղցր խաւսի նորա լեզուն,
Բընաւ չընկնի յիր աչքն քուն[32]։

(մեղու)

Ուշագրավ է, որ մտապատկերային տարածության ընկալման հետ որոշակիորեն աղերսվում է մարմնաշարժողական[33] մտածողությունը։ Ինչպես նկատել ենք վերեւում, շարժողական մտածողության յուրահատկությունը մարմնի շարժումները վերահսկելու եւ համակարգելու կարողությունն է։ Մասնավորապես դասի գործընթացում, դպրոցական

[31] *Անդ, էջ 1280։*
[32] *Անդ, էջ 1287։*
[33] *Մտածողության այս տիպը հատկապես զարգացած է մարզիկների, պարողների, լողորդների, երաժիշտների, դերասանների շրջանում։*

միջոցառումների ժամանակ դպրոցահասակ երեխաները, մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելով սեփական մարմինը, արտահայտում են իրենց զգացմունքներն ու հույզերը՝ լուծելով ստույգ խնդիրներ. արտասանում են բանաստեղծություններ, առաջարկում հանելուկներ, ներկայացնում երգեր, պարեր, բեմադրություններ։ Օրինակ՝ Շնորհալու հանելուկների արտաբերության ժամանակ կարեւորվում են ճիշտ առոգանությունը, համապատասխան վարպետությամբ ձեռքերի, գլխի, աչքերի, ողջ մարմնի շարժումները. այդ հմտություններն ուղղակիորեն կապվում են մտավոր կարողությունների զարգացման հետ, որոնք էլ ղեկավարում են մարմնի շարժումները։ Հիշենք մրջյունի մասին գրված հանելուկը.

Կարի տեսայ ես շատ կարուան,
Որ կու իջնոյր ի խորասան.
Իշուին բոբիկ էր ու անփալան,
Մէկիկ հատիկ բառնան ու գան[34]:
(մրջյուն)

Այստեղ առկա է երկու իրականություն. երեխան արտասանում է հանելուկը՝ իր մտապատկերում ուրվագծելով կենդանական աշխարհի շարժումն ու աշխատանքային եռուզեռը։

Հանց գեղեցիկ հաւ իմաստուն,
Որ չէ տեսել էնցեղ գիտուն,
Երբ գողն գայ՝ մտնէ ի տուն,
Նա զաղաղակ բառնայ ի բուն[35]:
(սագ)

Դերային խաղի միջոցով ներկայացնելիս վերոբերյալ հանելուկներն ինքնաբերաբար զարգացնում են աշակերտների ոչ միայն լեզվական, շարժողական, տարածական, այլեւ ներանձնային ու միջանձնային բանականությունը։ Միջանձնային մտածողությունը վերաբերում է այլ մարդկանց նկատելու, ճանաչելու, նրանց ցանկություններն ու մտադրությունները հասկանալու հնարավորությանը։ Հիշյալ դերային խաղը մասնակից աշակերտներին հնարավորություն է ընձեռում արդյունավետ համագործակցելու միմյանց հետ։ Առհասարակ Շնորհալու

[34] *Անդ, էջ 1288։*
[35] *Անդ, էջ 1313։*

տարաբնույթ հանելուկները ոչ միայն ապահովում են աշխարհաճանաչողություն, ազգային-հայրենասիրական զգացումների ձեւավորում, այլեւ տալիս են ինքնադրսեւորվելու հնարավորություն։ Երեխաները հանելուկներ լուծելիս երեւան են բերում ինքնուրույնություն եւ ստեղծագործ միտք, բացահայտում են իրենց գիտելիքները, արագ եւ ճիշտ կողմնորոշվելու կարողությունները, նաեւ առաջ է գալիս ընկերներին գերազանցելու ձգտում։ Զարգանում է նաեւ ներանձնային մտածողությունը, որը սեփական հնարավորությունները հասկանալու ունակությունն է, եւ որի մասին տեղեկություններն օգտագործվում են մեր ողջ կյանքի ընթացքում։

Վերը ներկայացված վերլուծությունները հուշում են, որ Շնորհալու հանելուկները միանգամայն կիրառելի եւ աշխատունակ են ժամանակակից մանկավարժ-հոգեբանի տեսության շարակարգում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շնորհալու՝ մանկական գրականության գանձարան մտած հանելուկներն առանձնանում են բնությունը, տիեզերական երեւույթները, կենդանական աշխարհը, մարդկային հասարակությունը բացահայտող գեղարվեստական պատկերների բազմազանությամբ, հետաքրքրաշարժությամբ, մատչելիությամբ, երեխայի հոգեբանության ու մտածողության ներդաշնակությամբ եւ ունեն ուսումնակրթական ու դաստիարակչական հստակ նպատակադրում։

2. Ներսես Շնորհալու հանելուկները, բազմաբնույթ ու բազմանյութ լինելով, կարող են ապահովել երեխաների համակողմանի զարգացումն ու աշխարհաճանաչողությունը։

3. Գարդների տեսությունը կարելի է ընկալել որպես մարդու հնարավորություններն ի մի բերող, նրա անհատականությունն ամբողջացնող մի տեսություն, որի կիրառումն ուսուցման գործընթացում նպաստում է սովորողների գրեթե բոլոր հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը։

4. Վերլուծությունը ցույց է տալիս, որ Ներսես Շնորհալու հանելուկներն այսօր միանգամայն գործածելի են Գարդների տեսության շարակարգում եւ խիստ արդյունավետ են երեխայի անձի զարգացման գործում։

5. Արդի դպրոցը պետք է առաջնային համարի երեխաների բազմաբնույթ մտածողության զարգացման գործընթացը՝ դրա համար կիրառելով բազմապիսի գործիքներ։ Այդ գործում բացառիկ նշանակություն ունեն Ներսես Շնորհալու հանելուկները։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Ներսես Շնորհալի, հանելուկներ, Հովարդ Գարդներ, «Բազմաբնույթ Մտածողության» տեսություն:

РЕЗЮМЕ

Статья посвящена исследованию загадок Нерсеса Шнорали, одного из величайших фигур средневековой армянской литературы. Образцы этого малого жанра, принадлежащие перу великого ученого и педагога, рассматриваются в контексте теории множественного интеллекта профессора Гарвардского университета, американского педагога и психолога Говарда Гарднера. Произведения Шнорали содержат зародыши основополагающих принципов и новаторских идей, знаменующих зарождение армянской литературы для детей; их образовательно-воспитательное значение анализировалось в XX веке.

В частности, наставления в стихотворной форме и загадки Шнорали преследовали воспитательные, образовательные и познавательные цели и были представлены в соответствии с такими важными принципами детской литературы, как доступность, простота и интересное содержание. Привнесенные автором новаторские принципы в значительной степени поспособствовали развитию армянской детской литературы.

Задача статьи – раскрыть содержательность и функциональное значение загадок Шнорали, адресованных детям, в контексте теории множественного интеллекта, применяемой в XXI веке. Согласно Г. Гарднеру, существует семь типов интеллекта: лингвистический, логико-математический, пространственный, музыкальный, телесно-кинестетический, межличностный и внутриличностный.

Цель статьи – подчеркнуть тот факт, что загадки Шнорали сегодня не только сохраняют свое обучающее и познавательное значение, но и применимы в процессе развития личности. Подтверждая мысль Г. Гарднера о том, что для каждого человека характерна множественность форм мышления, восприятия и осмысления, которые лишь в редких случаях действуют независимо друг от друга, мы попытались посредством загадок показать одновременное действие этих форм. При проведении исследования использовали историко-сравнительный, сопоставительный и аналитические методы.

В статье делается вывод о том, что и сегодня на фоне различных геополитических процессов и передовых научных экспериментов загадки Нерсеса Шнорали продолжают оказывать мощное воздействие не только на систему ценностей, психологию и формирование внутреннего мира современного человека, но и на развитие множественного интеллекта.

SUMMARY

The article is devoted to the study of riddles by Nerses the Graceful, one of the greatest figures of the medieval literature. The samples of this small genre, written by the great scholar and pedagogue, are considered in the context of the theory of multiple intelligences of Harvard University professor, American educator and psychologist Howard Gardner. Nerses the Graceful's works contain the germs of the fundamental principles and innovative ideas that marked the birth of the Armenian literature for children. Their educational significance was analyzed in the twentieth century.

In particular, Nerses the Graceful's instructions in verse form and riddles pursued educational and cognitive purposes and were presented in accordance with such important principles of children's literature as accessibility, simplicity and interesting content. The innovative principles introduced by Nerses the Graceful contributed significantly to the development of the Armenian children's literature.

The aim of the article is to reveal the content and functional meanings of Nerses the Graceful's riddles addressed to children in the context of the theory of multiple intelligences applied in the 21st century. According to H. Gardner, there are seven types of intelligence: linguistic, logical-mathematical, spatial, musical, bodily-kinesthetic, interpersonal and intrapersonal.

The purpose of the article is to emphasize the fact that Nerses the Graceful's riddles today not only retain their educational and cognitive importance, but are also applicable in the process of the development of a personality. Confirming H. Gardner's idea that each person is characterized by a plurality of forms of thinking, perception and comprehension, which only in rare cases act independently of each other, we tried to show the simultaneous action of these forms through riddles. We applied historical, comparative and analytical methods in conducting the study.

The article concludes that even today on the background of various geopolitical processes and advanced scientific experiments, the riddles of Nerses the Graceful continue having a powerful impact not only on the system of values, psychology and the formation of the inner world of present-day human beings, but also on the development of multiple intelligences.